



ԲԱՉԱՄԱՎԷՊ

Զ. ՏԱՐԻ. ԹԻԻ 15.

1848

ԾԳՈՍՏՈՍԻ 1.

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ԴԱՍՏԻԱԳԱԿՈՒԹԻՒՆ

Լնդոնահայտանութեան Դէժ հնարք :

ԼՆՅԵԱԼ տարուան նոյեմբեր ամսոյն դաստիարակութեան հատուածին մէջ ցըցուցինք թէ դաստիարակութեան մէկհատիկ արգելքն է ինքնահաւանութեան կիրքը, որ կը նմանի ճամբուն վրայ տնկուած ժայռի մը՝ որ ճամբորդին կ'արգիլէ ճամբան առաջ երթալու, թէպէտ աչքին չերևնար, և շատ հնարքներով ալ չկոտրտիր, ճամբուն վրայէն չվերցուիր. անոր համար ալ ճամբորդները յուսահատութեան մէջ կը ձգէ : Հիմա Լստուծով մեր խոստմունքը կատարելու համար՝ ձեռք կը զարնենք վերցնելու ճամբուութեան ճամբուն վրայէն զայս մեծ ժայռը ինքնահաւանութեան, որպէս զի սղաքը կարենան դաստիարակուիլ դիւրաւ և աղէկ կերպով. այսինքն տգի-

տութեան փոսէն ելլեն ու իմաստութեան ճամբուն մէջ առանց արգելքի առաջ երթան :

Ինքնահաւանութեան ժայռը կործանելու համար պէտք է նախ ճանչնանք թէ ինչ բան է ինքնահաւանութեան կիրքը և ինչէն առաջ կուգայ : Ինչնենք. ինչպէս որ ամէն կիրքեր, ասանկ ալ ինքնահաւանութիւնը Լստուած տուեր է մեզի, տնկեր է մեր սրտին մէջ՝ աղէկ վախճանի համար. ուստի չկայ մէկ մարդ մը որ ինքնահաւանութեան կիրք սրտին մէջ չունենայ : — Իայց դու, ով սիրելի ընթերցող, դեռ խօսքս չմոցուցած՝ խօսքիս միտքը գէշի մի տանիր, ըսածս ծուռ մի մեկներ : — Ինքնահաւանութիւնը երբոր իր չափին մէջ կենայ՝ գէշ

բան չէ , այլ առաքինութիւն մըն է , հարկաւոր է ամէն մարդու , իբրեւ թէ ճամբուն երկու կողմի պատասպարող պատերն է : Ինքնահաւանութիւնը սեւ է ինք իրեն հաւնիլ . միթէ ամէն մարդ ալ Մտուծոյ հրաշալի ստեղծուածը չէ . մարդուս կազմուածքը հոգւով և մարմնով սքանչելի բան չէ : Ուրեմն մարդ մը թէ որ ինք իրեն հաւնի՝ գէշ բան չէ բրածը , այլ բնական բան է . Մտուծոյ արարածին հաւնիլ է . աղէկ բանին ո՞վ չհաւնիր : Բայց դժուարը և գէշն ան է որ մարդս բնական տկարամիտ ըլլալով , թէպէտ և բնութեան մէջ աղէկ բանին հաւնելու կարողութիւն ունի , սակայն չգիտեր ինչպէս որ պէտք է զատել աղէկը գէշէն . անով կը սխալի , աղէկին տեղ գէշ բանին կը հաւնի . աղէկը չճանչնար՝ կ'ատէ . իր քովը եղած կատարելութիւններուն քիչը շատի տեղ կը դնէ , չունեցածը ունեցածի տեղ , ասանկով կ'ըլլայ որ ինք իրեն պակտութիւններուն կը հաւնի . և այսպէս ինք իրեն հաւնիլն որ աղէկ բան է՝ կ'ըլլայ գէշ և ամէն գէշութիւններուն պատճառ : Բոլոր աս ինքնահաւանութեան ժայռը դաստիարակութեան ճամբուն գիմնացէն վերցնելու համար պէտք է նախ սորվեցնենք աղէկը գէշէն զատելու ճամբան :

Մէկ մարդ մը իր մարդ ըլլալը ճանչնալէն ետեւ , թէ որ ուրիշ բան մըն ալ չուզէ ընել՝ գոնէ աս բանս պէտք է յանձն առնէ ընելու , այսինքն օրուան մէջ երբեմն ինք իրեն հարցնէ թէ աս բրածս աղէկ է թէ գէշ . միայն ճանչնալու մտքով ըլլայ , չէ թէ իր կերպը փոխելու համար . ահա աս կ'ըլլայ մէկ սկիզբ մը կործանելու ինքնահաւանութեան ժայռ : Բայ բանս թէպէտ ամէն վիճակի մարդկանց և ամէն հասակի համար հարկաւոր է , բայց որովհետեւ ծնողաց հետ է խօսքերնիս , հիմա անոնց հետ խօսինք՝ տղոց հետ վարուելու գործերուն վրայօք : Մի գու մայրիկ . բնէք թէ աղաղ լացաւ , դուն ալ ձեռքը բան մը տուիր որ ձայնը քաշէ ,

լռէ , կամ թէ սաստեցիր , կամ փայփայեցիր , կամ զարկիր , միտքդ դրած ըլլալով թէ պէտք է անանկ ընել : Եւ հիմա չեմ ըսեր թէ միտքդ փոխես , կամ թէ ուրիշ կերպ բան մը ընես . վասն զի գիտեմ որ ան չես ըներ . ճամբուդ վրայ ինքնահաւանութեան ժայռը կեցեր կ'արգիլէ , թող չիտար որ միտքդ դրածէդ ուրիշ կերպ բան մը կարենաս ընել : Ուրեմն հիմա ընելիքդ է միայն այս . դարձիր մէյմը հարցու դու քեզի . բրածս աղէկ է թէ գէշ . — գիտեմ որ պատասխան պիտի տաս երկու խօսքիս մէկը . կամ պիտի ըսես թէ Մղէկ է , ասանկ պէտք է ընել , և կամ պիտի ըսես թէ Մղէկ չէ . բռնար , բայց ինչ ընեմ . ուրիշ կերպ չըլլուիր : Եւ երկու պատասխաններն ալ ինքնահաւանութեան ժայռին արձագանգներն են . փաստ չունի , բաւական է որ աս հարցմունքով ժայռը կը ծեծուի . անոր համար ամէն ատեն , ամէն նոր գործքի մը ձեռք զարնելու ատեն մի ձանձրանար , հարցու , ու դու քեզի տուած պատասխանդ լռէ : Եսանկ ընելով կը սկսի ցնցուիլ խախտիլ ինքնահաւանութեան ժայռը . ինքիրեն կը սկսի սրտիդ մէջ մէկ շփոթութիւն մը , մէկ չհաւնիլ մը քեզի տուած պատասխաններուդ , Մղէկ չերենար . անանկ սորվեր եմ : Ինչ ընեմ , ուրիշ կերպ չըլլար . ես ալ անանկ մեծցեր եմ : Եւ պատասխանները օրուան մէջ շատ անգամ զրուցուելով , ինքնահաւանութեան հիւմը կը սկսին խախտել . վասն զի թէ որ խօսքիս մտիկ ընես , ու առանց ուզելու ուրիշ բան մը ընել՝ միշտ շարունակես ալ մէն անգամ հարցնելու դու քեզի՝ թէ բրածս աղէկ է , աս բրածէս ինչ օգուտ կամ ինչ փաստ կրնայ առաջ գալ . գիտնաս որ ասանկ ընելով՝ ինքիրեն քեզի մէկ հետաքրքրութիւն մը կուգայ իմանալու թէ արդեօք աս բրած բանս ուրիշ կերպ կրնայ ըլլալ թէ չէ . անանկ որ կը սկսիս հարցնել ուրիշներուն , կամ թէ զրուածք մը կայ ան բանին վրայ՝ կ'առնես մտադրութեամբ կը կարգաս որ իմանաս , որ եթէ կարելի բան

է՝ փորձես ու գործադրես : Եւ ասանկ զիւրին ճամբով մը ան ինքնահաւանութեան ժայռը կը ծեծուի ամէն օրուան հարցմունքներէն , ու կը սկսի կոտորտիլ իյնալ : Եւսկից կը հետեւի որ աս հարցմունքը ինքիրենդ շատ մը ժամանակ ընելէդ ետքը՝ քեզի փափաք մը կուգայ կարգալու մտադրութեամբ ամէն գաստիարակութեւ պատշաճեալ գրուածքները , և կը սկսիս օգուտը քաղել :

Տէս հիմա թէ այնահագին երեցած ինքնահաւանութեան անկործան ժայռը , որ աշխարհս տակն ու վրայ ընելու հետ է , ան՝ որ հասոյց մեր ազգը աս յետին թշուառութեան , ասանկ զիւրաւ կ'իյնայ՝ ով որ կ'ուզէ իր ճամբուն զիմացէն վերցընել : Եւոր համար ամէն մարդ իր ամէն գործոցը մէջ պէտք է այս ճամբան բռնէ որ կարենայ սկսիլ առաջացընել ազգը :

Հիմա հարցընեմ ես քեզի , ով սիրելի ընթերցող . կ'ուզէս վերցընել ճամբուդ վրայէն ինքնահաւանութեան անգծելի ժայռը . սորվէ ուրեմն աղէկը գէշէն զատել . և աս բանիս համար սու վորութիւն ըրէ հարցընել ինքիրենդ հետաքրքրութեամբ թէ աս ըրածս կամ ըսածս աղէկ է թէ գէշ . աս մը տածածս՝ աս հաւնածս աղէկ է թէ գէշ : — Եւսկի կը հետեւի որ առանց աշխատելու , առանց յոգնելու , առանց դժուարի գալու կը սորվիս ամէն բանի մէջ ընտրութիւն ընել ու աղէկը գէշէն զատել : Եւ աս հարցընելը պատճառ կ'ըլլայ քեզի որ բնական կերպով կը սկսիս ուզել որ աղէկ բաները գործադրուին , տղաքը կըթուին , մեծերը ինքնահաւանութեամբ գէշը աղէկի տեղ չփնէն ու զիրար չարհամարհեն : Եւսկի խօսքով , կը տեսնես առջեդ կործանած ցրուած ու ջնջուած ինքնահաւանութեան անկործան կարծուած սարսափելի ժայռը՝ առանց ուրիշ բարակ արհեստներ գործածելու :

Եւսանկ զիւրին ըլլալով ինքնահաւանութեան ախտին դեղը , պէտք է արհամարհել՝ անհոգ ըլլալ ու զանց ընել . այլ անոր ներհակ , որովհետեւ շատ զիւ-

րին բան է՝ անոր համար պէտք է որ ծնողք սորվեցընեն նաեւ իրենց որդուցը՝ մտքերնին բացուելուն պէս , որ հարցընեն իրենք իրենց այս խօսքս՝ թէ Եւսգեօք աղէկ է ըրածս թէ գէշ : — Եւսայնպէս հաւանեալ եմ որ եթէ մէկ տան մը մէջ ասանկ ամէնքը սովորին հարցընելու իրենք իրենց , և իրարու ալ միտք ձգելով որ հարցընեն , միայն այս բարի սովորութեամբ անանկ ազատ կ'ըլլան ինքնահաւանութեան ախտէն , որ կատարեալ մարդկութեան ամէն տեսակ կըթուութեան մէջ համարձակ կրնան առաջ երթալ :

Հ . Գ . Մ

Ինքնահաւանութեան առաջնութիւն :

(Թ) Եւ որ մէկը քեզի ծառայութիւն ընելու համար իրեք քայլ տեղ կ'երթայ , դուն քու երախտագիտութիւնդ ցուցընելու համար նայէ որ վեց երթաս :

(Թ) Եւ որ մեծութիւն չունիս , ջանազեղ մեծութեան արժանի ընելու . և ան ատեն արժանի կ'ըլլաս , երբոր բարեք կ'ընես ուրիշի , ու ձեռքէդ եկածին չափ կ'աշխատիս :

(Թ) Եւ որ մէկը ուղղել կ'ուզես , ուրիշներուն առջեւ մի յանգիմաներ , վասն զի ան ատեն զինքը ատող կ'երենաս և ոչ թէ անոր տկարութիւնները կամ պակասութիւնները :

(Թ) Եւսակցութեան մէջ ամէն զգուշութիւն ընել անկարելի բան է : Եւսզգուշութեամբ կամ կատակով բերնէ ելած մէկ խօսք մը , շատ անգամ նաեւ խելքով զուրկուածք մը՝ շատ բան կ'արժան մարդուն , որ իր պատիւը պահել կ'ուզէ :